ՀՏԴ 355.1

Հոգեբանություն

Հակոբ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՄՀ ԿՀՍ ֆակուլտետ
E-mail: gevorgyan.hakop@mail.ru

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում քննվում են զինվորական ծառայության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները՝ ի դեմս զինվորական ծառայության անվտանգության (այսուհետ՝ ԶԾԱ) ապահովման համակարգի:

Ծառայողական գործունեության արդյունավետությունը (այսուհետ՝ ԾԳԱ) որոշվում է բազմաթիվ գործոններով ու չափորոշիչներով, որը առաջին հերթին կապվում է ԶԾԱ ապահովման հետ:

Հոդվածում հետազոտության միջոցով բացահայտվել և ամփոփվել է այն, որ մարտական հերթապահություն իրականացնող և չիրականացնող զորամասերի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-ն, ի դեմս այլ սոցիալ-հոգեբանական գործոնների, պայմանավորված է նաև հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության տարբեր մակարդակներով, որոնք իրենց հերթին պայմանավորված են որոշակի անձնային հատկությունների արտահայտվածությամբ: Ուստի զինված ուժերի զորամասերի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել նաև ԶԾԱ ապահովման առաջնային բաղադրիչների (հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգություն) հիմքում ընկած անձնային հատկությունների ձևավորման և զարգացման գործընթացներ:

Բանալի բառեր՝ անվտանգություն, տնտեսական ինտեգրացիա, ռիսկ, հասարակություն, մարտական գործողություններ, շարժառիթ, ֆիզիկական և հոգևոր սթրես:

А.Геворгян

В статье рассматриваются социально-психологические факторы, определяющие эффективность военной службы, в частности система обеспечения безопасности военной службы (далее - СБС / безопасность военной службы /). Эффективность военной деятельности (далее - ЕМА) определяется рядом факторов и критериев, которые в первую очередь связаны с обеспечением ЕМА.

В статье обобщены данные исследования, в результате которого было выявлено, что ЭМА младшего офицерского состава, помимо других социально-психологических факторов, обусловливается еще и разным уровнем психологической, информационной и физической безопасности, которая в их в свою очередь, обусловлены степенью выраженности тех или иных личностных характеристик. Поэтому для обеспечения необходимого уровня эффективности боевой деятельности младшего офицерского состава воинских частей Вооруженных Сил необходимо реализовать процессы формирования и развития личностных качеств, лежащих в основе основных компонентов (психологического, информационного и физического. безопасность) психологического обеспечения безопасности военной деятельности.

Служба в Вооруженных Силах напрямую связана с боеспособностью армии. С точки зрения обеспечения боеспособности Вооруженных Сил и постоянного повышения ее уровня важно выявить психологические механизмы оценки эффективности службы в Вооруженных Силах. Результаты комплексного исследования показывают, что в основе эффективности военной деятельности лежат настойчивость, организованность, терпение, явная эмпатия, высокий уровень интеллекта и самоконтроля, выражение общей эмоциональности и ее отдельных компонентов в норме, которые напрямую влияют на уровень достижения успеха в Вооруженных Силах.

Ключевые слова: безопасность, экономическая интеграция, риск, общество, военные действия, мотивация, физическое или психическое напряжение.

H.Gevorgyan

The article deals with the social-psychological factors, determining the effectiveness of military service, in particular the system of military service safety assurance (hereinafter - MSS /security of military service/). Efficiency of military activity (hereinafter -EMA) is determined by a number of factors and criteria, which are primarily connected with the ensuring of the EMA

The article summarizes the research data, as a result of which it has been revealed that the EMA of the junior officer staff, besides other socio-psychological factors, is also conditioned by different levels of psychological, informational and physical security, which, in their turn, are conditioned by the degree of expressiveness of certain personal characteristics. Therefore, in order to ensure the necessary level of

effectiveness in the military activities of junior officer staff of military units of the Armed Forces it is necessary to implement processes of formation and development of personal qualities that underlie the main components (psychological, informational and physical security) of psychological security assurance of military activity.
*Service in the Armed Forces is directly related to the combat capability of the army. In terms of supporting combat capability of the Armed Forces and constantly increasing its level, it is important to identify psychological mechanisms for assessing the effectiveness of service in the Armed Forces. The results of the complex study show that effectiveness of military activity is based on perseverance, organization, patience, evident empathy, high level of intelligence and self-control, expression of general emotionality and its particular components in the norm, which directly influence the level of achieving success in the Armed Forces.**Key words: security, economic integration, risk, society, hostilities, motivation, physical or mental stress.*

Ժամանակակից աշխարհում աճում է հետաքրքրությունը անվտանգության և մարդու անվտանգ գոյության խնդիրների նկատմամբ: Այս պայմանները գիտնականներին ստիպում են որոնել խնդիրները հասկանալու և լուծելու նոր եղանակներ՝ պայմանավորված սոցիալ-հոգեբանական խնդրահարույց երևույթներով, առօրյա կյանքի սպառնալիքների կանխման, ինչպես նաև անձնական և հանրային անվտանգություն հանգամանքներով: Անվտանգությունը ժամանակակից գիտության ինտեգրացիոն կատեգորիաներից է: Մի կողմից անվտանգությունը անհատի գոյության և զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է, մյուս կողմից՝ անհատի հիմնական պահանջմունքներից մեկը: Դա պայմանավորված է տեղեկատվության հոսքի աճով, սոցիալ-տնտեսական ճնշմամբ, որը բացասաբար է ազդում մարդու ֆիզիկական, մտավոր և սոցիալական առողջության վիճակի վրա: Մարդն ավելի շատ վախենում է այն վտանգներից, որոնց մասին ինքն ավելի շատ գիտի, և ավելի քիչ է վախենում այն ռիսկերից, որոնց մասին ինքն ավելի քիչ է տեղյակ[1]: Զինվորական ծառայությունը պետական գործունեության այն կարևորագույն տեսակներից է, որտեղ զինծառայողին վերաբերող ներկայիս պահանջները չեն սահմանափակվում միայն մասնագիտական որակների առկայությամբ, այլ ենթադրում են նաև հատուկ արժեքների առկայություն [2]:

---

[1] *Տե՛ս* ***Ропейк Д., Грей Дж.*** *Риск: Руководство для принятия решений о том, что действительно безопасно и что представляет угрозу в окружающем мире. URL: http://www.securitylab.ru/analytics/350799.php (2008)*

[2] *Տե՛ս* ***Пивоваров Р. В., Беловолов В. А., Вабищевич А. В.****, Военная служба: ценностно-онтологический анализ феномена. Электронная библиотека, режим доступа: file:///C:/Users/admin/Downloads/voennaya-slujba-tsennostno-ontologicheskiy-analiz-fenomena.pdf (26.03.2020)*

Զարգացող հասարակության համար կարևոր է մասնագիտական գործունեությունը՝ կապված պետության և հանրային անվտանգության ապահովման, իրավունքների և պաշտպանության հետ: Եվ, բնականաբար, կարևորվում է անձի դերը մասնագիտական գործունեության ու այդ գործունեության իրականացման մեջ և հատկապես զինվորական ծառայության մեջ՝ բանակում:

Զինվորական գործունեությունը մարդու յուրօրինակ գործունեության տեսակ է: Ըստ Վ. Հ. Մարգարյանի՝ զինծառայողների մարտական գործունեության կառուցվածքում մեծ դեր ունեն նպատակները, որոնցով պայմանավորվում են գործողությունների եղանակն ու բնույթը: Մարտական գործողությունները բնութագրվում են շարժառիթներով: Հարկ է նշել, որ գործունեության մեջ շարժառիթներն ունեն ոչ միայն մղող, այլև կանոնավորող և իմաստավորող դերակատարություն:[1] Իսկ ըստ Ա. Ն. Լեոնտևի՝ գործունեության հիմնախնդիրը կապված է *շարժառիթ, նպատակ, գործընթաց* հասկացությունների հետ[2]: Ռազմական գիտական գրականության վերլուծությունները ցույց են տալիս, որ զինվորական ծառայության առաջադրանքների հաջող իրականացմանը նպաստում է զինծառայողների մասնագիտական որակների, հմտությունների և կարողությունների առկայությունը: Իսկ ԾԳԱ տեսանկյունից՝ այն զինծառայողներից պահանջում է պատշաճ մակարդակի կրթվածություն, մասնագիտական ու ֆիզիկական պատրաստվածություն, հոգեբանական կայունություն:

Ծառայողական գործունեությունը բնութագրվում է որպես բարձր ֆիզիկական և հոգևոր սթրես, որը ազդեցություն է ունենում ԾԳԱ որոշակի մակարդակի ձևավորման վրա, իսկ վերջինս որոշվում է բազմաթիվ գործոններով ու չափորոշիչներով, որը առաջին հերթին կապվում է ԶԾԱ ապահովմամբ և պայմանավորված է որոշակի անձնային հատկությունների արտահայտվածությամբ:

Անհատական անվտանգության տարբեր ասպեկտներ հետազոտության առարկա են հոգեբանական և մանկավարժական գիտություններում:

Անվանի հոգեբան Բրյուս Շնայերն իր հետազոտության մի մասը նվիրել է անվտանգության զգացողությանը որտեղ և ինչպես է դա արտահայտվում, ինչպես է այն տարբերվում անվտանգության իրականությունից: Ըստ Բրյուս Շնայերի՝ ավելի ընդհանուր իմաստով մարդը կարող է ապահով լինել նույնիսկ այն ժամանակ, երբ դա չի զգում: Եվ մարդը կարող է իրեն ապահով զգալ, եթե իրականում այդպես չէ: Անվտանգության զգացողությունն ու իրականությունը, անկասկած, կապված են միմյանց հետ, բայց դրանք հաստատ նույնը չեն:

---

[1] *Տե՛ս* ***Վ. Հ. Մարգարյան,*** *Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, Եր., 2009. էջ 37-38*

[2] ***Волкова М. Н.,*** *Деятельностный подход и категория деятельности в психологии, Учеб. Пособие, Владивосток, 2007, с. 23-24.*

Այսպիսով, Բրյուս Շնայերը եզրակացնում է, որ այդ երևույթները նկարագրելու համար ավելի լավ է օգտագործել երկու տարբեր բառեր [1]:

Ծառայողամարտական խնդիրների հաջող իրականացման համար առաջնային նշանակություն են ստանում ԶԾԱ ապահովման հարցերը: Խաղաղ պայմաններում և մարտական գործողությունների ժամանակ անվտանգության ապահովման խնդիրները պայմանավորված են իրավիճակի պայմաններով և սպառնալիքների գործոններով:

ԶԾԱ-ն ապահովման միջոցառումներն իրականացնում է օրենքների, համազորային կանոնադրությունների, հրամանների պահանջներին, պաշտոնական և մասնագիտական պարտականություններին համապատասխան: Սպայական կազմը զորավարժությունների, մարտական պատրաստության, սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման, տնտեսական աշխատանքների և այլ միջոցառումների իրականացման, ինչպես նաև զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս ստանձնում է անվտանգության պահանջների ապահովման պատասխանատվությունը:

ԶԾԱ համակարգի արդյունավետ գործելիությունը պայմանավորված է խնդիրների կատարման համար համակողմանի ապահովման աստիճանով, որը ներառում է ԶԾԱ նյութական ապահովումը, բժշկական ապահովումը և բարոյահոգեբանական ապահովումը: Նյութական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է խնդիրներ կատարող զինծառայողների սպառազինության, տեխնիկայի, զինամթերքի, վառելիքի, պարենի, իրային, բժշկական, քիմիական, բնակարանային կարիքները ժամանակին և լիարժեքորեն ապահովելու նպատակով:

ԶԾԱ բժշկական ապահովումը բուժկանխարգելիչ և սանիտարահամաճա-րակաբանական միջոցառումների այն համալիրն է, որի գործունեությունը զինծառայողների մարտական պատրաստության և մարտունակության պահպանման նպատակն է: Բարոյահոգեբանական ապահովումը ծառայությունը հաջողությամբ անցկացնելու նպատակով անձնակազմին անհրաժեշտ բարոյահոգեբանական վիճակ ստեղծելու և այն պահպանելու ուղղությամբ հրամանատարների կողմից իրականացվող համալիր տեղեկատվադաստիարակչական, հոգեբանական, սոցիալական-իրավական և մշակութաժամանցային միջոցառումներն են, նպատակաուղղված զինծառայողների բարձր բարոյահոգեբանական վիճակի ձևավորմանն ու պահպանմանը:

ԶԾԱ ապահովման նպատակով իրականացվող միջոցառումների վերլուծությամբ հնարավոր է դառնում աշխատանքի թերությունների և ցածր արդյունավետության ընդհանուր պատճառները բաժանել երկու խմբի՝

[1] Տե՛ս **Шнайер Б.** *Психология безопасности. URL:* http://www.securitylab.ru/analytics/350909

զինծառայողների անհատական առանձնահատկություններ և պաշտոնատար անձանց կազմակերպչական գործունեության թերություններ:

Հեղինակավոր ռազմական տեսաբան և պատմաբան Կառլ ֆոն Կլաուսևիչը գրել է. «Պատերազմն իր էությամբ ճակատամարտ է: Մարտը հոգևոր և ֆիզիկական ուժերի չափում է կողմերի փոխադարձ բախմամբ: Հոգեկան վիճակն առավելագույն որոշիչ ազդեցություն ունի ռազմական ուժերի վրա»:

ԾԳԱ-ին ազդում են որոշակի գործոններ՝ պայմանավորված անձնային հատկություններով:

ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական կազմի ԾԳԱ ձևավորումը, արդյունավետության տարբեր մակարդակները պայմանավորող մասնագիտական և հոգեբանական պատրաստվածությունը, ինչպես նաև ծառայության անվտանգությունը պայմանավորող անձնային հատկություններ բացահայտելու նպատակով իրականացվել է մասնագիտական հարցում 200 զինծառայողների շրջանում: Հարցմանը մասնակցել են այն զինծառայողները, ովքեր մասնակցել են 2016 թ. քառօրյա պատերազմին և ունեն երկարամյա ծառայողամարտական փորձառություն (շտաբային և զորային օղակի զինծառայողներ):

Հարցումների արդյունքներով եզրակացրինք, որ ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է զինծառայողների հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովմամբ, որը պայման է մարտունակության բարձրացման, բարոյահոգեբանական միջավայրի ձևավորման և միջանձնային վստահելի փոխհարաբերությունների ապահովման համար:

Հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրումը հասարակությունների գլոբալիզացիայի համապատկերում հնարավորություն է ստեղծում բացահայտելու գոյություն ունեցող սպառնալիքների բազմազանությունը: Եթե հաշվի առնենք ներկայիս մարտահրավերները և հարցը դիտարկենք 2020թ. 44-օրյա պատերազմի համատեքստում, ապա պարզ է դառնում, որ ծառայողամարտական արդյունավետ գործունեության ապահովման խնդրում առաջնային է դառնում զինծառայողների հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգությունը, որոնք պայմանավորված են ոչ միայն սպառազինության և ռազմական տեխնիկայի ապահովվածությամբ, այլ նաև անձնային հատկություններով:

Այսպիսով, որպես ԶԾԱ ապահովման առաջնային բաղադրիչներ կարող ենք դիտարկել հոգեբանական անվտանգությունը, տեղեկատվական անվտանգությունը, ֆիզիկական անվտանգությունը:

Հոգեբանական գրականության ուսումնասիրմամբ և հարցումների արդյունքում առանձնացվել են 430 անձնային հատկություններ, որոնք պայմանավորում են զինծառայողների անվտանգության ապահովումը: Իրականացված հետազոտությամբ առանձնացվել են ընդհանուր 65 անձնային հատկություններ՝ ըստ բաղադրիչների և առաջնայնության:

Զինծառայողների հոգեբանական անվտանգությունը ծառայությունը հաջողությամբ անցկացնելու համար անձնակազմին անհրաժեշտ բարոյահոգեբանական վիճակ ստեղծելու և այն պահպանելու համար հրամանատարների կողմից անցկացվող միջոցառումների համալիրն է՝ հստակ նպատակաուղղվածությամբ:

Զինծառայողների հոգեբանական անվտանգության ապահովումն իրականացվում է տեղեկատվահոգեբանական, տեղեկատվաքարոզչական, սոցիալ-իրավական առանձին և համալիր միջոցառումների կազմակերպմամբ:

Զինված ուժերը հասել են զարգացման այնպիսի մակարդակի, երբ զինծառայողի ծառայողական գործունեության գրեթե բոլոր ասպեկտները մեծապես կախված են նաև տեղեկատվական համակարգերից, ուստի ընթանում են տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանցերի զարգացման, տարբեր ստորաբաժանումների միջև էլեկտրոնային կառավարման և ծառայությունների ներդրման ակտիվ գործընթացներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները էապես փոխել են զինծառայողի առօրյա գործունեությունը, հաղորդակցման եղանակները և բարձրացրել են տեղեկատվական հոսքերի կարևորությունն ու դերը ծառայության բոլոր ոլորտներում:

Զինծառայողի տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է մի վիճակ, որտեղ նրա անձին չեն կարող էական վնաս հասցնել շրջակա տեղեկատվական տարածքի գործոնները:

Տեղեկատվական անվտանգության հիմքը կազմում է զինծառայողների անհատական, խմբային և զանգվածային գիտակցության անվտանգությունը տեղեկատվական սպառնալիքների առկայության դեպքում, որոնց առաջին շարքին պետք է դասել տեղեկատվահոգեբանական ազդեցությունը:

Տեղեկատվական սպառնալիքների առկայությունը կարող է առաջացնել հոգեհուզական և սոցիալ-հոգեբանական լարվածություն, բարոյական նորմերի աղավաղում և, որպես հետևանք, անհատ զինծառայողների, ստորաբաժանումների ոչ կանոնադրական վարքագիծ ու փոխհարաբերություններ: Նման ազդեցությունների արդյունքում հնարավոր են անհատ զինծառայողների կամ զինվորական կոլեկտիվների գիտակցության խոր վերափոխումներ, ծառայողական միջավայրում բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բացասական փոփոխություններ:

Զինված ուժերի բարեփոխումներում տեղեկատվական սպառնալիքների ազդեցության արդյունքը կարող է լինել մարտունակության թուլացումը և անվտանգության անկայուն վիճակը, որը կհանգեցնի զինված ուժերի պաշտպանունակության և անվտանգության ոլորտում մի շարք բացասական հետևանքների:

Զինված ուժերի՝ որպես պետության ռազմաքաղաքական կարևոր բաղադրիչի անվտանգության ապահովման համար պետք է առաջին հերթին կրթական համակարգի և լրատվամիջոցների միջոցով ազգաբնակչության և զինծառայողների լայն զանգվածների գիտակցությանը հասցնել տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերին վերաբերող հրահանգներն ու դրանից բխող վարքականոնները, քանի որ տեղեկատվական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքների կանխումը, հակազդումն ու չեզոքացումը զինված ուժերի և պետության հիմնախնդիրներն են:

Այսպիսով, զինված ուժերի տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով կազմակերպված միջոցառումները պետք է իրականացվեն և ՝ խաղաղ, և ՝ սպառնացող, և ՝ պատերազմական ժամանակաշրջաններում, որոնք պետք է լինեն համապարփակ, գաղափարական և դաստիարակչական՝ ուղղված ինչպես զինվորական ստորաբաժանումներում գործունեություն ծավալող բոլոր կատեգորիաների անձանց գիտակցությանը, այնպես էլ պետության յուրաքանչյուր քաղաքացու կողմնորոշմանը:

Վերլուծելով 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում հակառակորդի տեղեկատվահոգեբանական ներգործությունից պաշտպանության կազմակերպման գործընթացի արդյունավետությունը՝ կարելի է արձանագրել, որ մարտական գործողությունների և ամենօրյա գործունեության ընթացքում բացասական ազդեցության կանխարգելմանը, չեզոքացմանը (թուլացմանը) և մեկուսացմանը, դրանց հետևանքների վերացմանը, ինչպես նաև հասարակության մեջ և զինծառայողների շրջանում անցանկալի գաղափարախոսության ներգործության և տարածման կանխարգելմանը նպատակաուղղված աշխատանքները ցանկալի արդյունք չեն տվել:

Անձի ֆիզիկական անվտանգությունը որոշվում է անհատի գոյության հարմարավետությամբ՝ եղանակային պայմաններ, ջրի և սննդի աղբյուրների առկայություն, բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների զարգացման ռիսկի բացակայություն [1]:

Ֆիզիկական անվտանգությունը գործողությունների համալիր է, որը նպատակաուղղված է անձին կամ անձնակազմին արտաքին սպառնալիքներից և անհատների անօրինական գործողություններից պաշտպանելու կամ պաշտպանվելու համակարգի ստեղծմանը:

Ֆիլիպովը նշում է, որ ֆիզիկական պաշտպանության համարժեքությունը բարձրացնելու համար պահանջվում է ստեղծել անվտանգության սպառնալիքների և առկա խոցելիությունների տվյալների շտեմարան [2]:

---

[1] *Физическая безопасность* https://www.s-director.ru/project/physical_security.html

[2] ***Филиппов Д. Л.,*** *Компоненты риска физической безопасности, No4,* https://doi.org/10.32686/1812-5220-2019-16-4-82-93 *(2019)*

Եթե հաշվի առնենք ներկայիս մարտահրավերները և հարցը դիտարկենք 2020թ. 44-օրյա պատերազմի համատեքստում, ապա պարզ է դառնում, որ զինծառայողների ծառայողամարտական արդյունավետ գործունեության ապահովման խնդիրներում մարտիկների հոգեբանական անվտանգության և տեղեկատվական անվտանգության հետ միաժամանակ կարևորվում են նրանց ֆիզիկական անվտանգության հարցերը, քանի որ սպառազինության և ռազմական տեխնիկայի անհրաժեշտ քանակով ապահովվածությունը և արդյունավետ կիրառումը հնարավոր է այդ սպառազինության և ռազմական տեխնիկայի կիրառողների ֆիզիկական անվտանգ պայմանների դեպքում:

Հաշվի առնելով, որ և՛ պատերազմական, և՛ հետպատերազմյա ժամանակահատվածում տեղեկատվական-հոգեբանական ներգործության մեթոդների և հնարքների կիրառելիությունը կարող էին և հիմա էլ անհրաժեշտ են որոշակի տեղեկատվական և հոգեբանական օպերացիաներ իրականացնելու համար՝ հետայսու դրանց դերն ու նշանակությունը առավել կարևորվում են:

ԶԾԱ համար անձնային հատկությունների առաջնահերթությունը, ըստ անվտանգության ապահովման բաղադրիչների (հոգեբանական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, ֆիզիկական անվտանգություն)՝ որոշվել է Պիրսոնի աստիճանային դասակարգման բանաձևի միջոցով և արձանագրվել են որպես Բարձր կարևորության, Միջին կարևորության և Ցածր կարևորության անձնային հատկություններ:

Այսպիսով, զինված ուժերի տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով կազմակերպված միջոցառումները պետք է իրականացվեն և ՛ խաղաղ, և ՛ սպառնացող, և՛ պատերազմական ժամանակաշրջաններում, որոնք պետք է լինեն համապարփակ, գաղափարական և դաստիարակչական՝ուղղված ինչպես զինվորական ստորաբաժանումներում գործունեություն ծավալող բոլոր կատեգորիայի անձանց գիտակցությանը, այնպես էլ պետության յուրաքանչյուր քաղաքացու կողմնորոշմանը:

Հոգեբանական անվտանգության համար առաջնային անձնային հատկությունների

1. Max – 194, Min – 151:
2. 194-151= 43:
3. 43/3=14.3
4. 151+14.3≈**166 (ցածր)**
5. 165.3+14.3≈**180 (միջին)**
6. 179.6+14.3≈**194 (բարձր)**

N	**Հոգեբանական անվտանգության համար** առաջնային անձնային հատկությունների **Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ Ը** (ըստ կարևորության)		
	151-166 (ցածր)	**167-180 (միջին)**	**181-194 (բարձր)**
1.	Մեծահոգություն-169	Համբերատարություն-175	Կազմակերպվածություն-189
2.	Ճկունություն-158	Համառություն-171	Անշահախնդրություն-184
3.	Համարձակություն -164	Հավատարմություն-176	Ընկալունակություն-191
4.	Խոհեմություն-156	Հիշողություն-167	Ուշադրություն-193
5.	Խնայողականություն-156	Սառնասրտություն-177	Պատասխանատվություն-188
6.	Բարոյականություն-166	Ճարպկություն-174	Հարմարվողականություն-193
7.	Զսպվածություն-163	Աշխատասիրություն-172	Վերլուծական մտածողություն-184
8.		Հնարամտություն-167	Ինքնավստահություն-186
9.		Տոկունություն-171	Ընկերասիրություն-187
10.		Արտահայտվելու ունակություն-168	Նպատակասլացություն-191
11.		Գործնական մտածելակերպ-174	Վճռականություն-189
12.		Տեսական մտածելակերպ-178	Կարգապահություն-188
13.		Հեռատեսություն-171	Կամք-186
14.		Դիվանագիտություն-175	Կենսուրախություն-184
15.		Հոգատարություն	Նախաձեռնողականություն-185
16.		Անկեղծություն-179	Շփման հմտություն-182
17.		Խելացիություն-175	Դիտողականություն-181
18.		Ստեղծագործականություն-172	Մասնագիտական վարպետություն-194
19.		Հուսալիություն-176	Զգուշություն-194
20.		Ըմբռնողականություն-168	Գործնականություն-183
21.		Հայրենասիրություն-174	Ճշտապահություն-182
22.		Կենտրոնացվածություն-176	Նվիրվածություն-183
23.		Սթափություն-174	Հանդուրժողականություն-192
24.		Փոխըմբռնում-178	Ինքնատիրապետում-192
25.		Մանրազնինություն-168	Հավասարակշռվածություն-182
26.		Առաքինություն-171	Կատարողականություն-183

27.		Պատրաստակամություն-179	Գաղտնապահություն-194
28.		Կշռադատվածություն-176	Լավատեսություն-188
29.		Անկոտրունություն-179	
30.		Դիմադրողականություն-179	

Տեղեկատվական անվտանգության համար առաջնային անձնային հատկությունների

1. Max – 194, Min – 151:
2. 194-151= 43:
3. 43/3=14.3
4. 151+14.3≈**166 (ցածր)**
5. 165.3+14.3≈**180 (միջին)**
6. 179.6+14.3≈**194 (բարձր)**

N	**Տեղեկատվական անվտանգության համար առաջնային անձնային հատկությունների ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ** (ըստ կարևորության)		
	151-166 (ցածր)	167-180 (միջին)	181-194 (բարձր)
1.	Համբերատարություն -155	Դիմադրողականություն-169	Կազմակերպվածություն-188
2.	Համառություն-166	Հավատարմություն-172	Ուշադրություն-194
3.	Աշխատասիրություն-165	Անշահախնդրություն-171	Հարմարվողականություն-181
4.	Մեծահոգություն-158	Ընկալունակություն-175	Վերլուծական մտածողություն-186
5.	Հնարամտություն-156	Հիշողություն-169	Համարձակություն-187
6.	Ճկունություն-165	Սառնասրտություն-178	Կարգապահություն-191
7.	Տոկունություն-153	Պատասխանատվություն-176	Կամք-182
8.	Նպատակասլացություն-151	Ինքնավստահություն-179	Հեռատեսություն-187
9.	Խոհեմություն-164	Ընկերասիրություն-171	Դիվանագիտություն-182
10.	Խնայողականություն-163	Արտահայտվել ու ունակություն-176	Անկեղծություն-188
11.	Բարոյականություն-156	Վճռականություն-168	Շփման հմտություն-187

12.	Հոգատարություն-168	Գործնական մտածելակերպ-177	Մասնագիտական վարպետություն-191
13.	Նախաձեռնողականություն-156	Տեսական մտածելակերպ-174	Զգուշություն-188
14.	Ստեղծագործականություն-166	Կենսուրախություն-176	Ճշտապահություն-187
15.	Գործնականություն-164	Խելացիություն-172	Կենտրոնացվածություն-183
16.	Հանդուրժողականություն-161	Հուսալիություն-179	Փոխըմբռնում-182
17.	Զսպվածություն-159	Դիտողականություն-173	Հավասարակշռվածություն-188
18.	Մանրազնինություն-164	Ըմբռնողականություն-176	Կատարողականություն-178
19.	Լավատեսություն-164	Հայրենասիրություն-176	Գաղտնապահություն-194
20.		Նվիրվածություն-178	Կշռադատվածություն-183
21.		Սթափություն-178	Անկոտրունություն-182
22.		Ինքնատիրապետում-176	
23.		Առաքինիություն-173	
24.		Պատրաստակամություն-176	

Ֆիզիկական անվտանգության համար առաջնային անձնային հատկությունների

1. Max – 194, Min – 151:
2. 194-151= 43:
3. 43/3=14.3
4. 151+14.3≈**166 (ցածր)**
5. 165.3+14.3≈**180 (միջին)**
6. 179.6+14.3≈**194 (բարձր)**
7.

N	**Ֆիզիկական անվտանգության համար առաջնային անձնային հատկությունների** **ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ** (ըստ կարևորության)		
	151-166 (ցածր)	167-180 (միջին)	181-194 (բարձր)
1.	Համառություն-159	Համբերատարություն-173	Կազմակերպվածություն-191
2.	Հավատարմություն-164	Աշխատասիրություն-176	Դիմադրողականություն-187
3.	Անշահախնդրություն-158	Վերլուծական մտածողություն-168	Ուշադրություն-184

4.	Ընկալունակություն-162	Հնարամտություն-172	Ճարպկություն-181
5.	Հիշողություն-165	Ինքնավստահություն-172	Պատասխանատվություն-182
6.	Սառնասրտություն-163	Արտահայտվելու ունակություն-176	Տոկունություն-184
7.	Մեծահոգություն-165	Վճռականություն-173	Հարմարվողականություն-184
8.	Խոհեմություն-154	Համարձակություն-174	Ճկունություն-184
9.	Տեսական մտածելակերպ-152	Գործնական մտածելակերպ-171	Ընկերասիրություն-181
10.	Բարոյականություն-162	Կամք-172	Նպատակասլացություն-188
11.	Անկեղծություն-165	Հեռատեսություն-174	Կարգապահություն-185
12.	Դիտողականություն-169	Դիվանագիտություն-177	Խնայողականություն-184
13.	Ըմբռնողականություն-161	Հոգատարություն-179	Կենսուրախություն-181
14.	Զսպվածություն-169	Խելացիություն-176	Նախաձեռնողականություն-187
15.		Ճշտապահություն-169	Ստեղծագործականություն-181
16.		Հայրենասիրություն-172	Շփման հմտություն-187
17.		Սթափություն-171	Հուսալիություն-182
18.		Փոխըմբռնում-180	Մասնագիտական վարպետություն-193
19.		Հավասարակշռվածություն-172	Զգուշություն-194
20.		Մանրազնինություն-169	Գործնականություն-182
21.		Առաքինություն-172	Նվիրվածություն-182
22.		Անկոտրունություն-177	Հանդուրժողակա-նություն-185
23.			Կենտրոնացվածություն-181
24.			Ինքնատիրապե-տում-186
25.			Պատրաստակամություն-181
26.			Կատարողականություն-189

27.			Գաղտնապահու-թյուն-193
28.			Կշռադատվածու-թյուն-182
29.			Լավատեսություն-185

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը։